չաններ են ցոյց տալիս (Ֆրանսա, Իտալիա, Թիւրքիա, Աւստրո–Հունգարիա, եւն.): Աշխատաւորական զանգուածները, մասնաւորապէս անօրինակ թշուառութեան, արդէն այն զիտակցութեանն են եկել, որ փրկութիւնը յեղափոխութեան մէջ է, որի դէպքում իրենք, Մարքսի ասածի պէս, ոչինչ չունին կորսնցնելիք, բացի իրենց շղթաներից: Եւ այս բոլորի դէմ փայլում է հոկտեմբերեան յեղափոխութեան կարմիր ասողը՝ իրրեւ փրկութեան փարոս... Ի՞նչը կարող է այլեւս կասեցնել ընկերային յեղափոխութեան բռնկումը գոնէ պատերազմող երկիրներում...

Այսպէս էին մտածում բոլշեւիկները, մեծից մինչեւ փոքրը, հոկտեմբերեան յեղաշրջման ժամանակ: Այդ օրերին ամերիկացի հրապարակագիրներից մէկը առիթ է ունենում տեսնուելու Լենինի հետ: Մի ժամուան խօսակցութեան ընթացքում, ասում է նա, Լենինը հինգ անգամ ցատեցաւ հեռախօսին՝ լուր առնելու համար Գերմանիայում «բոլշ առ բոլշ սպասուող» ընկերային շարժումներից...

Այսօր մենք այլեւս կարիք չունինք փաստերի յետեւից ընկնելու՝ ցոյց տալու համար, թէ որքա՞ն երազական էին այն յոյսերը, որոնք մղում էին բոլշեւիկներին դէպի «պրոլետարական յեղափոխութեան» պատնէշները: Ինքը Լենինը հեղնել է արդէն այդ յոյսերը Բրեստ–Լիտովսկեան խայտառակութիւնը ստորագրելիս, Կրոնշտադի բանուորներին եւ նաւաստիներին թնդանօթային կրակի տակ առնելիս եւ, վերջապէս, «պրոլետարական յեղափոխութիւնը» մանր–բուրժուական հոչակաւոր «Նեպի» հունը խոթելիս...

Սակայն, ընկերային յեղափոխութեան պատմութիւնը սրանով չէ վերջանում: Եթէ համաշխարհային ընկերային յեղափոխութիւնը ինքն իրեն չէ ուզում դալ, ապա նրան պէտք է զօռով բերել! Բոլշեւիկեան յուսախաբուած երազները մի նոր հանդրուան գտան այս մտքի մէջ Բրեստ–Լիտովսկի դաշնագրից յետոյ: Եւ, ոգեւորուած այս մտքով, նրանք տենդային աշխատանքների ձեռնարկեցին եւ՛ Գերմանիայում եւ՛ Աւստրո–Հունգարիայում եւ՛ Իտալիայում եւ ամէն տեղ՝ իրենց ակնկալած ընկերային յեղափոխութիւնը դարբնելու, արագացնելու կամ բռնկեցնելու համար: Սրա համար նրանք միջազգային բանուորական շարժումը պառակտեցին, «Կոմինտերն» ստեղծեցին, Ռուսաստանի պետական գանձարանը ըսպառեցին, եւն., եւն.:

Այս աշխատանքների արդիւնքը եւս այսօր մեր աչքի առաջ է: Արդիւնքն այն է, որ մի շարք երկիրներում բանուորութեան արիւնը գետի պէս հոսեց, պատերազմի պատճառած թշուառութիւնը քաղաքացիական կռիւներով բազմապատկուեց, որպէսզի...որպէսզի «համաշխարհային ընկերայինի» տեղ համաշխարհային ֆաշիզմը դիւային քրքիջով իր յաղթական երթը կատարի...

Խօսենք փաստերով:

— 1918–ի վերջերին, Մոսկուայի մեքենայութիւններով ընկերային յեղափոխութեան դրօշը բարձրացաւ Հունգարիայում՝ Բէլա-Կունի առաջնորդութեամբ: Կարճատեւ կայծկըլտումից յետոյ այդ յեղափոխութիւնը տապալուեց եւ, այդ օրից մինչեւ հիմա, հունգարական աշխատաւորութիւնը ճզմում է ծովակալ Հորտիի երկաթէ կրունկների տակ:

— Նոյն օրերին նոյն ներշնչումներով Բաւարիայի ընկերային յեղափոխութիւնը բռնկեց՝ Կուրտ Այսնէրի գաղափարական ղեկավարութեամբ: Յեղափոխութիւնը պարտուեց եւ, այդ ժամանակից ի վեր, Գերմանիայում ոչ մի անկիւն չկայ, ուր քաղաքական յետադիմութիւնը այնքա՞ն զօրեղ լինի, որքան Բաւարիայում: Լիւդենդորֆեան ռասխտները եւ Հիտլերեան «սեւ շապիկաւորները», ամէն կարգի միապետականների հետ միասին, իրենց միջնաբերդն են դարձրել Բաւարիան եւ այնտեղից շարունակ ականներ են փորում գերմանական հանրապետութեան դէմ: Վերջինս վաղուց այս դաւերին զոհ գացած կը լինէր, եթէ չունենար մի Սոցիալ–Դեմոկրատիա, որը կուրծք տալով բոլշեւիկեան եւ ֆաշիստական ներդաշնակուած գրոհներին՝ պաշտպանում է հանրապետական ռեժիմը:

— 1920–ին բոլշեւիկները իրենց ազդեցութեան տակ առնելով Իտալիայի բանուորութեան մի մասը՝ ընկերային յեղափոխութեան փորձերի ձեռնարկեցին Միլանում, Նէապոլում, Հռովմում եւ արդիւնաբերական